ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2023 թվականի ապրիլի 18-ին գումարված արտահերթ նիստի մասին (Ազգային ժողովի պատգամավորների նախաձեռնություն)

N ը/կ	Հարցի անվանումը	Հեղինակը	Ծանոթություն
1	2	3	4
1.	«Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի (2021-2026 թթ.) 2022 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին» զեկույց	**Հիմնական զեկուցող՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան Հարակից զեկուցողներ՝ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյան ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյան ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյան Կ-522-28.02.2023**	Զեկույցն ընդունվել է ի գիտություն:

2.	ա) «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին, բ) «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին **երկրորդ ընթերցում**	**ՀՀ կառավարություն Կ-533-17.03.2023-ՊԱ Արփինե Սարգսյան Անհետաձգելի**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 62 կողմ, 0 դեմ, 23 ձեռնպահ ձայներով
3.	ա) «Փրկարար ծառայության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին, բ) «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին, գ) «Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» 2023 թվականի մարտի 1-ի ՀՕ-41-Ն օրենքում լրացումներ կատարելու մասին **երկրորդ ընթերցում**	**ՀՀ կառավարություն Կ-535-23.03.2023-ՊԱ Արփինե Սարգսյան Անհետաձգելի**	Քննարկվեց և ընդունվեց երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ՝ 62 կողմ, 0 դեմ, 23 ձեռնպահ ձայներով

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արտահերթ նիստը նախաձեռնողների ներկայացուցչի առաջարկով 2023 թվականի ապրիլի 18-ին գումարված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգից հանվել են՝

- Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմի դատավորի թափուր տեղի համար առաջադրված դատավորների թեկնածուների ընտրության (540-28.03.2023),
- Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի քաղաքացիական գործերի քննության դատական կազմի դատավորի թափուր տեղի համար առաջադրված դատավորների թեկնածուների ընտրության (541-28.03.2023),
- Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավորի թափուր տեղի համար առաջադրված դատավորների թեկնածուների ընտրության (542-28.03.2023) հարցերը: